

Հարց

Ե՞րբ է Հանձնաժողովը հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթը հայտարարում չկայացած:

Պատասխան

Հանձնաժողովը հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

ա) սահմանված ժամկետում ոչ մի դիմում չի տրվել.

բ) մասնակիցներից ոչ մեկը չի բավարարել մրցույթի պայմանները, այդ թվում եթե բացակայում են հեռուստառադիոհաղորդումների կազմակերպման տեխնիկական հնարավորությունները կամ հայտարարած տեխնիկական հնարավորությունները բավարարված չեն.

գ) սույն կարգի 22-րդ կետով սահմանված ժամկետում հաղթողի կողմից մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը չի ստորագրվել կամ լիցենզային վճարը չի մուծվել.

դ) մասնակիցներից ոչ մեկը չի ներկայացել Հանձնաժողովի նիստին: